# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԳՈՌԱ ՍՊԸ-ն ՀՀՏՄ-ՄԱՆԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/01 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 5 | - | - | - | - | Գույները և չափերը՝ ՀՀ Առողջապահության նախարարի 12.02.2024թ. N 50-Ն հրամանի պահանջներին համապատասխան, Մնացած չափսերը և արտաքին տեսքի լուծումները համաձայնեցնել մանկապարտեզի տնօրինության հետ: Բարուրի սեղանը պետք է պատրաստված լինի էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ հումքից (օրինակ՝ փայտից (հաճար, սոճի, կեչի)), պետք է լինի լավ հղկված, ողորկ, առանց ծլեպների, էկոլոգիապես մաքուր և առողջության համար |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | անվտանգ նյութերով, լաքապատված (էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ նյութերով), անկյունները պետք է լինեն կլորացված կամ անկյուններին ամրացվեն պոլիմերային կամ ռետինե՝ անվտանգությունն ապահովող հատուկ դետալներ: Պետք է լինեն ամուր՝ պատրաստված մաշակայուն նյութերից, ինչը շահագործման ընթացքում ի հայտ չգալու պարագայում մատակարարը պարտավորվելու է սեղմ ժամկետներում փոխարինել մատակարարված ապրանքը և/կամ կատարել համապատասխան վերազինում կամ ամրացում: Պետք է ապահովվի էսթետիկությունը, մասնավորապես՝ գունավորումը, նկարազարդումը կամ լաքապատումը պետք է կատարվի որակյալ, հստակ գունավորմամբ, առանց արտադրական խոտանների: Պետք է ապահովվի էրգոնոմիկությունը, այսինքն՝ մատակարարվող գույքը պետք է լինի համապատասխան հասակային խմբի չափսային պահանջներով, |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ցանկալի է նաև լինի կարգավորման հնարավորությամբ և հարմարավետ՝ շահագործման ժամանակ: Արտաքին չափսերն են՝ 1000 x 600 x 700 մմ (L x Խ x Բ): Երեխայի անվտանգության համար բարուրի սեղանի երեսին՝ կողքերի և հետևի մասում տեղադրվում է անվտանգության բախարգելներ 250 մմ բարձրության: Բարուրի սեղանի տակի պահարանը պատրաստվում է լամինացված 18 մմ հաստությամբ նույն E0դասի ФSU-ով, որի եզրերը պետք է շրջափակվեն համապատասխան հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC կամ համարժեք) բաժանված, կիսված է երկու մասի, համապատասխանաբար՝ 1) 700 x 600 x 700 մմ (L x Խ x Բ) 2) 300 x 600 x 700 մմ (L x Խ x Բ), 1)-ին՝ ձախ մասը մեկ դռնով, որը ամրանում է երկու ծխնիով, ամբողջական պահարան է սրբիչները կախելու համար ( ներսում տեղադրված չորս մետաղական բարձրորակ կախիչով): 2)-րդ՝ աջ մասը բաժանված է երկու դարակների՝ և նախատեսված է կեղտոտ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | սպիտակեղենի համար: Դարակների դիմային հատվածները պատրաստված են նույն նյութից (օրինակ՝ E0դասի ФSU-ից), իսկ ներսի մասերը լամինացված 18 մմ հաստության E0դասի ФSU-ից, որոնց եզրերը կշրջափակվեն համապատասխան հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC կամ համարժեք): Դարակները և դուռը պետք է ունենան մետաղական օվալաձև բռնակներ: Հետնապատը պետք է լինի 4 մմ հաստությամբ լամինացված փայտաթելային սալից (ԴՎՊ) և նույն գույնի: Բարուրի սեղան-պահարանը ամբողջ պարագծով պետք է ունենա շրջանակած և ոտքեր: Ոտքեր հանդիսացող, տակը դրված-ամրացված ուղղանկյուն հենակի արտաքին չափսերն են՝ 900 x 600 x 100 մմ ( L x Խ x Բ), որի հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին, տակից պետք է ամրացվի պլաստիկե մուգ գույնի տակդիրներ, որոնց տակի պատերի հաստությունը՝ առնվազն 8 մմ է: Բոլոր միացումներն իրականացնել թաքնված ամրակցումներով: Գույնը |

նախապես համաձայնեցնել մանկապարտեզի տնօրինության հետ: Նմուշները պետք է մինչ մատակարարում համաձայնեցվեն պատվիրատուի հետ և առաջին իսկ պահանջի դեպքում՝ պետք է ներկայացվի ապրանքի համապատասխանության, որակի հավաստագիր (սերտիֆիկատ) կամ համարժեք փաստաթուղթ (օրինակ՝ անկախ փորձագիտական հաստատության կողմից տրված եզրակացություն): Պետք է սահմանվի երաշխիքային սպասարկում՝ առնվազն 1 տարի, արտադրական թերությունների և հնարավոր անհամապատասխանությունների վերականգնման, վերանորոգման և/կամ փոխարինման նպատակով: Ապրանքի վրա պետք է կատարվի մակնշում, որում նշված կլինեն արտադրող երկիրը, արտադրող ընկերությունը, արտադրման համար հիմք հանդիսացող նորմատիվա-իրավական փաստաթղթը, արտադրման ժամանակ օգտագործված նյութերը և դրանց անվտանգության և էկոլոգիապես

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ГОРА ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀՏՄ-ՄԱՆԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/01 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 5 | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | մաքուր հումք լինելու մասին գրառումները և այլն: Մակնշումը պետք է կատարվի հայերեն, թույլատրվում է նաև միջազգային լեզվով (մասնավորապես՝ անգլերեն, ռուսերեն), ընթեռնելի տարբերակով: Մակնշումը պետք է կատարվի այնպիսի հատվածում, որպեսզի չխաթարի ընդհանուր էսթետիկ տեսքը: Մակնշումն անմիջապես արտադրանքի վրա կատարելու անհնարինության դեպքում թույլատրվում է վերոգրյալ տեղեկատվությունը ամփոփել ուղեկցական թերթիկում և/կամ գրքույկում (կամ համարժեք, օրինակ՝ տեխնիկական անձնագրում): |